Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***08.04.2022թ. ժամը 11.00***

Նախագահում էր Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 9 անդամներից 8-ը:

Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում են Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարը և քարտուղարի տեղակալը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գևորգ Գալստյանը, «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը, մարզպետի խորհրդականները և օգնականները, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները, մարզի համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2022 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման մասին:

/Զեկ. Մարտին Պետրոսյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2022 թվականի 1-ին եռամսյակի արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2022 թվականի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների փլուզման և հնարավոր քարաթափումների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների մասին:

/Զեկ.Վանիկ Հարությունյան - մարզպետարանի տեղական ինքնակառավարմ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2021 թվականին իրականացված և 2022 թվականին նախատեսվող սուբվենցիոն ծրագրերի գործընթացի մասին:

/Զեկ. Արմեն Զոհրաբյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ/

5. Այլ հարցեր:

Հայտարարությունով հանդես եկավ՝

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) հետևողական աշխատանքներ տանել մարզի համայնքներում /բնակավայրերում/ 2022 թվականին ՀՀ կառավարության կողմից գյուղատեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերն իրականացնելու համար.

2) հետևողական աշխատանքներ տանել մատակարարների հետ՝ մարզի հողօգտագործողների համար մատչելի գներով սուբսիդավորված ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման գործընթացը պատշաճ կազմակերպելու և ավարտին հասցնելու համար.

3) մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ համատեղ աշխատանքներ տանել գարնանացան մշակաբույսերի սերմեր ձեռքբերելու ուղղությամբ.

4) մարզում ոռոգման սեզոնին պատշաճ նախապատրաստվելու համար համագործակցել «Գեղարքունիք» ՋՕԸ-ի հետ, կազմակերպել և իրականացնել համայնքների ոռոգման համակարգերն աղբից մաքրելու աշխատանքները.

5) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2022 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ուղղությամբ՝ սեփական եկամուտների ամսական և եռամսյակային համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

6) ավարտին հասցնել 2022 թվականի համայնքային բյուջեների կազմման աշխատանքները և օրենքով սահմանված կարգով ներկայացնել մարզպետարան, ինչպես նաև մուտքագրել գանձապետական համակարգ.

7) հետևողականություն ցուցաբերել աշխատողների աշխատավարձերի ժամանակին վճարմանը՝ ընթացիկ պարտքեր չկուտակելու համար, ինչպես նաև ապահովել աշխատողների ամենամյա արձակուրդների ժամանակին տրամադրումը.

8) ընդունել ի գիտություն, որ

ա. 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերը մարզի համայնքների կողմից մարզպետարան ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանված 2022 թվականի ապրիլի 27-ը, իսկ մարզպետարանի կողմից Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ 2022 թվականի ապրիլի 30-ը:

բ. թերի և ՀՀ գործող ներմերին չհամապատասխանող նախագծանախահաշվային փաստաթղթերը միջգերատեսչական հանձնաժողովի նիստում չեն քննարկվելու և դրանք լրամշակման են վերադարձվելու միայն մեկ անգամ.

9) վերահսկել մարզի համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքը.

10) կանխատեսվող գարնանային հեղեղումների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների փլուզման և հնարավոր քարաթափումների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումներն իրականացնելու համար ունենալ վարարումների կառավարման ու վտանգների չեզոքացման սխեմաներ, գույքագրել համայնքներում առկա տեխնիկան՝ ինքնաթափերը, էքսկավատորները, մղանները, բուլդոզերները, ավտոամբարձիչները և աշխատանքների համար պատրաստ տեխնիկայի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան.

11) COVID-19-ի դեմ պատվաստումների գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար համագործակցել համայնքների բնակավայրերի բժշկական կազմակերպությունների հետ և հետևողական աշխատանքներ տանել համայնքապետարանների նոր աշխատողների COVID-19-ի դեմ պարտադիր պատվաստվելու գործընթացն ապահովելու համար.

12) մարզպետարան ներկայացնել համայնքապետարանների և համայնքային ենթակայության կազմակերպությունների COVID-19-ի դեմ չպատվաստված աշխատողների ցուցակը.

13) պատասխան ակնկալող մտից փաստաթղթերին /գրություններ, դիմումներ, հարցումներ և այլն/ պատասխանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

12.04.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ